ԱՂՎԱՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Հ. Ս. ՍՎԱԶՅԱՆ

Աղվանական պետության գոյության մասին առաջին հիշատակությունը պատկանում է հին ու նոր դարաշրջանների սահմանագլխին ապրող հույն աշխարհագետ Ստրաբոնին (մ. թ. ա. 63—մ. թ. 20 թթ.)։ «Նրանց (աղվանացիների—Հ. Ս.) թագավորները,—գրում է նա,—նույնպես հոյակապ են։ Այժմ, ճիշտ է, նրանց մոտ մեկ թագավոր է կառավարում բոլոր ցեղերին, այն դեպքում, երբ նախկինում յուրաքանչյուր տարալեզու ցեղ կառավարվում էր սեփական թագավորով[1]։ Լեզուները նրանց մոտ քսանվեցն են, այնպես որ նրանք միմյանց հետ հեշտությամբ չեն մտնում հարաբերությունների մեջ» (Διαφέρουσι δὲ καὶ οἱ βασιλεῖς νυνὶ μὲν οὖν εἰς πάντων ἄρχει, πρότερον δὲ καὶ καθ᾽ἑκάστην φυλῆτταν ἴδια ἐβασιλεύοντο ἕκαστοι. Γλῶττται δ᾽εἰσὶν ἓξ καὶ εἴκοσι αὐτοῖς διὰ τὸ μὴ εὐεπίμικτον πρὸς ἀλλήλους)[2].

Ստրաբոնի այս հաղորդումը՝ կապված ստրկատիրական Հռոմի կայսերական ժամանակաշրջանի նվաճումների և, հատկապես, Պոմպեոսի կովկասյան արշավանքների հետ, հաստատվում է անտիկ շրջանի այլ հեղինակների տեղեկություններով։ Պլուտարքոսի, Ապպիանոսի, ապա նաև Դիոն Կասսիոսի միահամուռ վկայությամբ այդ արշավանքների ժամանակ Պոմպեոսն իր ճանապարհին հանդիպում է արդեն ձևավորված պետական միավորի, իսկ նրա լեգեոնները կռվում են լավ զինված, մեծաքանակ և թագավորի կողմից առաջնորդվող կանոնավոր բանակի դեմ[3]։

---

[1] *Ստրաբոնը չի գրում «ցեղ», «ժողովուրդ» կամ «թագավորություն»։ Նրա մոտ այս հասկացությունները արտահայտված են „Γλῶττα“ լեզու բառով։* [*Տե՛ս* К. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании IV в. до н. э.—VII в. н. э. М.—Л 1959, с. 59, С. М. Кркяшарян, К интерпретации некоторых сведений древнегреческих авторов об Армении. (Проблемы античной истории и культуры, Ереван 1979, с. 132)]։ *Այն բառացի հասկանալու դեպքում համապատասխան կապակցությունը կստանար «յուրաքանչյուր լեզու կառավարվում էր սեփական թագավորով» անճիշտ բովանդակությունը, քանի որ լեզուները թագավորներ չեն ունենում։ Հ. Ցամպոլսկին, ելնելով Աղվանքում մեկ ընդհանուր լեզվով խոսող բնակչություն տեսնելու ցանկությունից, գտնում է, որ այստեղ խնդրո առարկա բառը գործածված է «բարբառ» իմաստով և ըստ այդմ էլ եզրակացնում, թե աղվանական ցեղերը ոչ թե խոսել են տարբեր լեզուներով, այլ նույն լեզվի 26 բարբառներով* [*տե՛ս* З. Ямпольский, Древние авторы о языке населения Азербайджана. (Известия АН Аз. ССР, 1955. № 8. с. 65, *նույնի՝* Две заметки АзФАНа, 1942, № 7, с. 74]: *Անշուշտ, Հ. Ցամպոլսկին սխալվում է իր նպատակային մեկնաբանությամբ, քանի որ այդ դեպքում նույն կապակցությունը կունենար «յուրաքանչյուր բարբառ կառավարվում էր սեփական թագավորով» անիմաստ ձևով, քանզի անհեթեթություն է կարծել, թե բարբառները ունենում են թագավորներ։ Այսպիսով, կասկածից վեր է, որ Ստրաբոնը խոսում է ցեղի մասին։ Սակայն հայտնի է, որ ցեղերն էլ թագավորներ չեն ունենում, ուստի միանգամայն հավանական է, որ հույն աշխարհագետի նշած թագավորները պարզապես ցեղային առաջնորդներ էին։*

[2] The Geography of Strabo, with an English translation by Horace Leonard Jones, in eight volumes, vol. V, London, 1954. p. 228, 229 (IX, IV; 6), Страбон, География, пер., статья и коммент. Г. А. Стратановского. Л., 1964, с. 476.

[3] Plutarch's Lives, with an English translation by Berradotte Perin in eleven volumes, vol. V, London, 1955, p. 204, 209 (Pompey XXXIV, XXXV). Плутарх Сравнительные жизнеописания в трех томах, Т. II, М., 1963, с. 358—359; Appian։

Չնայած աղբյուրների այս որոշակի հաղորդումներին, մի խումբ ուսումնասիրողներ աղվանական պետության կազմավորման ժամանակաշրջան են համարել մ. թ. I դարը։ Այսպես. Ադրբեջանի պատմության խորհրդային առաջին հետազոտողներից մեկը՝ Վ. Լևիատովը, գտնում է, որ աղվանացիները «մ. թ. ա. I դարում դեռևս ապրում էին չքայքայված, տոհմացեղային հարաբերությունների պայմաններում»[4]։ Ըստ նրա, միայն այդ շրջանում է, որ գույքային անհավասարության առաջացման հետևանքով աղվանական ցեղերի մոտ սկսվում է տոհմական կարգերի քայքայման ու դասակարգերի ձևավորման պրոցեսը[5]։ Նույն կարծիքին են նաև այլ հեղինակներ[6]։

Հարցը հատուկ քննության նյութ չդարձնելով՝ հայ պատմաբաններ Ս. Երեմյանն ու Բ. Ուլուբաբյանը Աղվանից պետության ծագման ժամանակաշրջան են համարում մ. թ. I դարը[7], իսկ Ա. Հակոբյանը, հենվելով բացառապես Ստրաբոնի գործածած „νυνί... πρότερον -այժմ ... նախկինում» կապակցության կառուցվածքի վրա՝ մոտավորապես մ. թ. ա. I դ. սկիզբը[8]։

Անտիկ հեղինակների վերոբերյալ վկայությունները ուսումնասիրողների մի այլ խմբի հանգեցրել են մի անվերապահ հետևության. մ. թ. ա. I դ. կեսերին արդեն գոյություն ուներ կազմավորված, 26 ցեղերից բաղկացած պետական միավորում՝ «Աղուանք» (Ἀλβανία. Albania) անունով, իր թագավորով, կառավարման նվիրապետական համակարգով ու ժամանակին համապատասխան սոցիալ-տնտեսական հասարակարգով։ Ընդունելով հանդերձ Աղվանից պետության գոյությունը նշված ժամանակաշրջանում, այս ուսումնասիրողները, սակայն, տարակարծիք են նրա կազմավորման ժամանակի հարցում։ Նրանք Աղվանից պետության առաջացումը հիմնականում տանում են ավելի վաղ ժամանակներ։ Նրանցից, օրինակ, Կ. Տրևերը Աղվանքի պատմության ու մշակույթի հարցերին նվիրված իր մենագրության մեջ դրում է, որ Աղվանքում պետությունն իր ավարտուն ձևը ստացած պետք է լինի՝ մ. թ. ա. II դ. կեսերին[9], սակայն, քիչ հետո ավելացնում է. «գուցե և ավելի շուտ»[10]։ Նույն հարցի մասին խոսելիս ադրբեջանցի հեղինակ Ի. Ալիևը մատնանշում է մ. թ. ա. III—II դդ.։ Նա իր այս կարծիքը հիմնավորում է Աղվանքի թագավորի համար Ստրաբոնի գործածած «այժմ- νυνί» արտահայտությամբ, որն, ըստ Ի. Ալիևի, «պետք է վերագրել, համենայն դեպս ոչ ուշ,

---

Roman History, with an English translation by Horace White. In four vol., vol. II, London, 1955, p. 438—437 (XII, XV, 103). Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе, собрал, издал с русским переводом В. В. Латышев, Т. I, СПа., 1890. с. 531, Dio's, Roman History with an English translation by Earnest Cary, in nine volumes, vol. III, London, 1961, p. 92—95 (XXXVI, 54, 1—5). *Դիոն Կասսիոս Կոկկեյանոս, Հռոմեական պատմություն (Հովսեպոս Փլավոս, Դիոն Կասսիոս, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Ս. Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1976, էջ 142—143)։*

[4] В. Н. Левиатов, Азербайджан с V в. до н. л. по III в. и. л. (Известия АН АзССР, 1950, № 1, с. 79—80).

[5] *Նույն տեղում, էջ 80։*

[6] О. Ш. Исмизаде. Ялойлутепинская культура, Баку, 1956, с. 89, История Азербайджана (в трех томах), т. I, Баку, 1958, с. 59.

[7] С. Т. Еремян, Основные проблемы периодизации истории народов Закавказья (Труды объединенной научной сессии АН СССР и АН Закавказских республик по общественным наукам, Баку, 1957, с. 100), *Բ. Ուլուբաբյան, Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, Երևան, 1981, էջ 113։*

[8] А. Акопян, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987, с. 18.

[9] К. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании IV в. до н. э.—VII в. н. э., М.-Л., 1959, с. 144:

[10] *Նույն տեղում, էջ 145։*

բան III—II դդ. մ. թ. ա., իսկ, հնարավոր է, և ավելի վաղ ժամանակների»[11]։

Աղվանական պետության կազմավորման հարցի մասին հատուկ հոդված է հրատարակել Ի. Բաբաևը[12]։ Նրա նպատակն է եղել «հնագիտական նյութերի ու գրավոր աղբյուրների տվյալների համադրության հիման վրա վերանայել Աղվանքում պետականության համեմատաբար ուշ ծագման տարածված կարծիքը»[13]։ Եվ այս նպատակից էլ ելնելով՝ նա այն համոզմունքն է հայտնել, որ «Աքեմենյան պետության կործանումից հետո, մ. թ. ա. IV—դարի վերջում—III դարի սկզբում, ծագում ու ձևավորվում է Աղվանական պետությունը»[14]։

Աղվանական պետության մասին խոսելիս, Ֆ. Մամեդովան գրում է, որ այն «անտիկ գրավոր աղբյուրների համաձայն ստեղծվել է մ. թ. ա. I դարում, իսկ ըստ հնագիտական հետազոտությունների՝ IV դ. վերջին տասնամյակում—III դ.[15]։ Եվ հիմք ընդունելով իբրև թե հնագիտական հետազոտությունների ցույց տված այս ժամանակաշրջանը՝ նա Աղվանքի սահմանների մասին մ. թ. ա. I—մ. թ. I դդ. աղբյուրների հաղորդումները զուտ մեխանիկորեն, առանց փաստարկման, տեղափոխում է մ. թ. ա. III դ. և այդ ժամանակից սկսած պատկերում արդեն ձևավորված, իր քաղաքական սահմաններն ունեցող պետական միավորում[16]։ Նույն՝ մ. թ. ա. IV—III դարերը որպես Աղվանից պետականության առաջացման ժամանակաշրջան են համարում նաև ադրբեջանցի այլ հեղինակներ[17]։

Սակայն Աղվանից պետության ծագման համար ցույց տրվող ժամանակաշրջանը ադրբեջանցի հեղինակների կողմից լոկ ցանկալին իրականության տեղ ներկայացնելու հետևանք է[18], իսկ դրա հաստատմանը միտված վկայությունները՝ անհամապատասխան։ Այսպես. գրեթե բոլոր ադրբեջանցի հեղինակները, Աղվանից պետության ծագման ժամանակաշրջան համարելով իրենց համար ցանկալի IV—III դդ., վկայակոչում են մ. թ. II դ. պատմիչ Արրիանոսի մի հաղորդումը։ Իր «Ալեքսանդրի արշավանքը» հայտնի աշխատության մեջ գրելով Մակեդոնիայի ու Աքեմենյան Պարսկաստանի միջև մ. թ. ա. 331 թ. Գավգամելայում տեղի ունեցած ճակատամարտի մասին, Ար-

---

[11] И. Алиев, К интерпретации параграфов 1, 3, 4 и 5 IV главы книги «География» Страбона (Вестник древней истории, 1975, № 3, с. 160).

[12] И. А. Бабаев, К вопросу о возникновении государства Албании (Кавказской). (Известия АН Азерб. ССР, История, философия, право, Баку, 1976, № 4, с. 40—51).

[13] Նույն տեղում, էջ 40։

[14] Նույն տեղում, էջ 47։

[15] Ф. Мамедова, Политическая история и историческая география Кавказской Албании, Баку, 1986, с. 57.

[16] Նույն տեղում, էջ 144 և հաջ.։

[17] Дж. А. Халилов, Материальная культура Кавказской Албании. (IV в. до н. э.—III в. н. э.), Баку, 1985, с. 160, 197, 206; Р. Б. Геюшев, Христианство в Кавказской Албании, Баку, 1984, с. 3.

[18] Ադրբեջանցի հեղինակների ուսումնասիրություններում լինդամերապես առաջին պլանում են ցանկալին իրականության տեղ ներկայացնելու նկրտումները։ Ուստի նրանց աշխատություններում Աղվանքը պատկերվում է արհեստականորեն ընդարձակված սահմաններով, հնացված պատմությամբ, սոցիալապես ու տնտեսապես բարձր զարգացմամբ ու վաղեմի ժամանակներից այնտեղ բյուրք էթնիկ տարրերի գոյությամբ։ Բարեբախտաբար, նման աշխատությունների ամբողջությունը պատմական գիտության մեջ արդեն ընդգծել են մասնագետները [տե՛ս А. П. Новосельцев, Древнейшие государства территории СССР (Некоторые итоги и задачи изучения) (История СССР, 1985, № 6, с. 85—103); С. Л. Тихвинский, Состояние и задачи координации исторических исследований (Вопросы истории, М., 1986, № 9)].

րիանոսը հայտնում է, որ աքեմենյանների կողմից մակեդոնացիների դեմ կռվում էին նաև աղվանացիները։ Օգտվելով Ալեքսանդր Մակեդոնացու զինակիցներ Լագոս Պտղոմեոսի ու Արիստոբուլոս Կասանդրացու ռազմական օրագրերից ու հաշվետվություններից[19], նա մասնավորապես գրում է. «Մարերին գլխավորում էր Ատրոպատեսը, մարերի հետ միասին էին կատիշները, ալբանացիներն ու սակեսինները» (Μήδων δὲ ἡγεῖτο Ἀτροπάτης. Συνετάττοντο δὲ Μήδοις Καδούσιοί τε καὶ Ἀλβανοὶ καὶ Σακεσῖναι)[20]։ Աղբբեջանցի հեղինակների կարծիքով այս հաղորդման մեջ արտացոլված է Աղվանից պետության գոյության գաղափարը։ Մինչդեռ, ինչպես երևում է, աղվանացիները հիշյալ ճակատամարտում հանդես չէին գալիս ոչ թե սեփական թագավորի կամ գերագույն հրամանատարի առաջնորդությամբ, որ վայել է պետականություն ունեցող ժողովուրդներին (օրինակ, ինչպես Մեծ ու Փոքր Հայքերի բանակները[21] իրենց թագավորներ Օրոնտեսի ու Միթրաուստեսի գլխավորությամբ[22]), այլ մարերի, կատիշների ու սակեսինների հետ մեկտեղ՝ Մարաստանի սատրապ Ատրոպատեսի ընդհանուր հրամանատարության ներքո։ Ուրեմն, աղվանացիները նշված ժամանակաշրջանում պետականություն չունեին, քանի որ կռվում էին ուրիշ երկրի տիրակալի գլխավորությամբ։ Այս միտքը հաստատվում է նաև Արրիանոսի նույն հաղորդման հետագա քննությամբ։ Պարզվում է, որ ինքը՝ պատմիչը ևս տարբեր կարգավիճակներով է ներկայացնում Ատրոպատեսի հրամանատարության տակ կռվողներին։ Նա նախ նշում է մարերին և ընդգծում, որ սրանց գլխավորում էր Ատրոպատեսը (հիշենք՝ «մարերին գլխավորում էր Ատրոպատեսը»), ապա հիշատակում է կատիշներին, աղվանացիներին ու սակեսիններին՝ որպես առաջինների հետ միասին հանդես եկողների («մարերի հետ էին կատիշները, աղվանացիներն ու սակեսինները»)։ Այսպիսի տարաբաժանմամբ անտիկ հեղինակը, կարծես, վերջիններիս՝ որպես առանձին ցեղային միությունների, հակադրում է մարերին՝ պետականություն ունեցող ժողովրդին, որոնք կռվում էին սեփական առաջնորդի գլխավորությամբ։ Եվ, իսկապես, ուսումնասիրվող ժամանակաշրջանում դա համապատասխանում էր պատմական իրականությանը։ Անտիկ աղբյուրները, մի կողմից, վկայում են այդ ժամանակ Մարական պետության, մեր օրինակում՝ Հյուսիսային Մարաստանի գոյությունը (որը քիչ ավելի ուշ նրա սատրապ Ատրոպատեսի անվան հետևությամբ վերանվանվեց Ատրպատական), մյուս կողմից, խոսում կատիշների (նրանց մոտ՝ Καδούσιοι) ու սակեսինների (Σακεσῖναι) մասին՝ որպես միայն ու միայն առանձին ցեղային միավորումների[23]։ Իսկ քանի որ կատիշներն ու սակեսինները այդ աղբյուրներում որոշակիորեն հանդես էին գալիս սոսկ որպես ցեղային միավորներ, ապա կասկած չի կարող լինել, որ մարերից առանձին ու այս ցեղային միությունների կողքին հիշատակվող աղվանացիները ևս Գավգամելայում հանդես էին գալու նմանատիպ քաղաքական կազմավորմամբ։ Դա էլ հենց արտացոլել է Արրիանոսը՝ սահմանազատում մտցնելով մարերի և կատիշների, սակեսինների ու աղվանացիների միջև։

---

19 Arrian, Anabasis Alexandri, with an English translation by E. Iliff Robson, in the volumes; vol. I, p. 246 (I, I, I). Арриан, Поход Александра, пер. с древнегреческого Е. Сергеенко, М.-Л., 1962, с. 47.

20 Arrian, III, 8, 4.

21 Quintus Curtius, with an English translation by John C. Rolfe. in two volumes, vol. I, London, 1956, p. 272. 273, (IV, XII, 10, 12). Квинт Курций Руф. История Александра Македонского, М., 1963, с. 115.

22 Arrian, III. 8, 5.

23 Նույն տեղում։ Նաև Diodoros of Sicily, with an English translation by C. H. Oldfadher. In ten volumes, vol. I, London, 1960, p. 354, 355 (II, 2, 3, XVII, 6, Դիոդորոս Սիկիլիացի, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Ս. Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1985 էջ 17 և հաջ.։

Այսպիսով, Արրիանոսի հիշյալ հաղորդումը չի կարող լինել այն հիմքը, որի վրա իրենց երազած եզրակացություններն են կառուցում ադրբեջանցի հեղինակները։ Իրականում այն ցույց է տալիս, որ աղվանացիները նշված՝ IV—III դդ. ապրում էին միայն ու միայն ցեղային միություններով։ Այդպիսի եզրակացության են հանգեցնում և հնագիտական աղբյուրները՝ Յալոյլութափա անունով հայտնի և մ. թ. ա. V—I դդ. թվագրվող[24], այսինքն, ուսումնասիրվող ժամանակաշրջանը ներկայացնող ու մյուս համաժամանակյա հնավայրերի պեղածո նյութերը[25]։ Այդ հնավայրերին հատուկ գետնափոր թաղումներից հայտնաբերված իրերը հիմնականում աշխատանքային գործիքներ են, տարբեր տեսակի զենքեր, կենցաղային առարկաներ, բրոնզյա ու ոսկյա զարդեր[26]։ Դրանք, ցեղի արտոնյալ խավերի հարուստ դամբարանները նրա շարքային անդամների շիրիմներից առանձնացնելով, միաժամանակ ընդգծում են, որ աղվանացիների հասարակական կյանքում այս շրջանում սոսկ սոցիալական շերտավորում էր տեղի ունենում, և ընդհուպ մ. թ. ա. I դարը նրանք ապրում էին ցեղային միություններով։ Պեղված բազմաթիվ գերեզմանները իրենց հիմնական պարունակություններով, միմյանցից առանձնապես չեն տարբերվում։ Մինչդեռ Աղվանից պետության գոյության դեպքում նրանց մեջ պիտի հանդիպեին թագավորական թաղումներ, որոնց բնութագրական են հարուստ գույքը, որի մեջ աչքի են ընկնում ոչ թե ոսկյա և արծաթյա առօրյա գործածական իրերը, այլ նույն մետաղներից պատրաստված հազվագյուտ առարկաները, բարձրաստիճան ննջեցյալին հողին հանձնելու արարողությանն ուղեկցող մարդկային զանգվածային զոհաբերությունները, դամբարանի մեծածավալ կառուցվածքը[27]։ Իսկ մինչև օրս պեղված մեծաքանակ դերեզմանափոսերի շարքում ոչ միայն նշված բնութագրական կողմերով, այլև դեթ այդ կողմերից մեկով առանձնացող և ոչ մի դամբարան Աղվանքում չի հայտնաբերվել։ Այս փաստը, որ մատնանշում են նաև իրենք՝ ադրբեջանցի հնագետները[28], նմանապես ակներև է դարձնում հարցին այն հեղինակների կամայական մոտեցումը, որոնք հայտարարում են, թե հնագիտական աղբյուրները որպես Աղվանից պետության ծագման ժամանակաշրջան են ցույց տալիս մ. թ. ա. IV—III դարերը։

Այսպիսով, գրավոր աղբյուրներն ու հնագիտական նյութերը միահամուռ վկայում են, որ ուսումնասիրողները սխալվում են Աղվանից պետության առաջացման համար նշելով IV—III և, նույնիսկ, III—II դարերը։ Այս ժամանակաշրջանում աղվանական ցեղերի քաղաքական կազմավորումները ցեղային միություններից այն կողմ չէին անցնում։ Եվ միայն ազատվելով Գավգամելայում (331 թ. մ. թ. ա.) պարտություն կրած Աքեմենյանների ենթակայությունից և ձեռք բերելով ինքնուրույնություն, նրանք այդ ինքնուրույնության պայմաններում հասարակական կյանքում տեղի ունեցող որոշակի սոցիալական տեղաշարժերի շնորհիվ գցում են դեպի պետություն տանող ուղու հիմքերը։ Քաղաքական կյանքում իշխանությունը որպես մշտական ու ժառանգական պաշտոն կենտրոնանում է ցեղային առաջնորդների, զորապետերի և արդեն հատուկ դաս դարձած քրմերի ձեռքում։ Դա հանգեցնում է հասարակության այն վաղագույն քաղաքական կազմակերպության ձևին, որը հայտնի է «ռազմական դեմոկրատիա» անունով, իսկ տնտեսական կյանքում մեծ զարկ են ստանում հողագործությունը, արհեստագործությունն ու առև-

---

[24] О. Ш. Исмизаде, *նշվ. աշխ., էջ 72։*

[25] С. М. Казнев, Археологические памятники Мингечаура как исторический источник для изучения истории Азербайджана (Известия АН АзССР, 1950, № 7, с. 169); Дж. А. Халилов, *նշվ. աշխ. էջ 53.*

[26] С. М. Казиев, *նշվ. աշխ., էջ 171—172,* О. Ш. Исмизаде, *նշվ. աշխ., էջ 4-5,* Дж. А. Халилов, *նշվ. աշխ., էջ 54—56։*

[27] В. М. Массон, Экономика и социальный строй древних обществ, Л., 1976, с. 169.

[28] Дж. А. Халилов, *նշվ. աշխ., էջ 201։*

տուրը։ Նոր, բարձր մակարդակի է հասնում մշակույթը։ Այս հիմքերի վրա էլ աղվանական ցեղային միություններում հասարակությունը աստիճանաբար ենթարկվում է սոցիալական տրոհման։ Ձևավորվում են այնպիսի հարաբերություններ, որոնք դնում են պետության՝ որպես նորաստեղծ հարաբերությունները կարգավորող հաստատության պահանջ։ Սոցիալական, տնտեսական ու քաղաքական բնույթի բնիկ-տեղական նոր ու որակական այսպիսի տեղաշարժերի հետ մեկտեղ աղվանական պետականության ծագման համար անհրաժեշտ էին նաև արտաքին, հոգևոր ու նյութական, մշակութային ազդակներ. նման խոշոր ազդակ ծառայեց հելլենիզմը արևելքում[29], որն իր ծաղկուն շրջանում, այսինքն՝ մ. թ. ա. III—I դդ. ընդգրկել էր բավականաչափ ընդարձակ շրջաններ։ Այն սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի զարգացման վրա ունեցած իր բարերար դերը կատարում էր ոչ միայն Մակեդոնիայում և սրան հաջորդած պետություններում՝ Սելևկիայում, Եգիպտական թագավորությունում և այլուր. այլև Մեծ Հայքում, Վիրքում, Ատրպատականում և հելլենիստական աշխարհի ծայրամասային մյուս երկրներում։

Նաև մերձկասպյան մարզեր էին ներթափանցում հելլենիզմի տարրեր։ Աղվանական ցեղերը, որոնք Ալեքսանդր Մեծի տերության փլատակների վրա ձեռք էին բերել անկախություն ու ինքնուրույնություն, նույնպես ներգրավվել էին հելլենիզմի ամենազոր ազդեցության ոլորտը։ Այս շրջանում փոխվում է թաղման ծիսակատարությունը, թաղումները դառնում են գետնափորային, դամբարանությունը՝ մեծաքանակ և նրբագեղ, փայլեցված խեցանոթներ, հիմնականում գորշ գույնի։ Բացի նետասլաքներից, որոնք պատրաստված են բրոնզից, զենքը երկաթյա է։ Զարդերը բրոնզից են։ Պատահում են ոսկյա ու արծաթյա իրեր, մանավանդ՝ օղեր[30]։

Հելլենիստական աշխարհի հետ աղվանական ցեղերի շփումը, սակայն, իրականանում էր ոչ թե հունական տարրի ներթափանցմամբ ու հաստատմամբ, այլ, հիմնականում, տնտեսական կապերի ընդլայնմամբ, միջազգային տարանցիկ առևտրի ծաղկմամբ ու այն քաղաքական իրադարձությունների արձագանքներով, որոնք տեղի էին ունենում Առաջավոր Ասիայում՝ նորաստեղծ Սելևկյան պետության ու մյուս պետությունների միջև։ Եվ հելլենիզմի այս զորեղ ազդեցությամբ աղվանական ցեղերի մոտ էլ ավելի է խորանում սոցիալական շերտավորումը, մեծանում գույքային անհավասարությունը, աճում մասնավոր սեփականությունը։ Այս կապակցությամբ բավական է հիշատակել դամբարաններից հայտնաբերված կնիք-մատանիները, որոնք, ուսումնասիրողների կարծիքով, պատկանել են մասնավոր անձանց և կարող էին ի հայտ գալ միայն մասնավոր սեփականության գոյության պայմաններում[31]։ Ըստ նրանց, այդ կնիք-մատանիների տերերը, հանդես գալով որպես սեփականատերեր, դրանք օգտագործել են անհատական գույքային գործարքները անձնական կնիքով հաստատելու համար[32]։ Այդ նույն կնիքների վրա տարբեր հագուստներով պատկերված մարդկանց ուրվագծերում արտացոլվել է հասարակության սոցիալական շերտավորումը։ Անվանի մարդկանց ճոխ, զոտևորված երկար հագուստն ու բարձր գլխարկը խիստ տարբերվում են զինվորի ու այլոց հագուստներից[33]։

---

29 А. Б. Ранович, Эллинизм и его историческая роль, М.-Л., 1960. Всемирная история, т. II, М., 1956, с. 211—342։ Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 489—499։

30 С. М. Казиев, նշվ. աշխ., էջ 173։

31 В. Н. Левиатов, նշվ. աշխ., էջ 69, Дж. А. Халиулов, նշվ. աշխ., էջ 155, 159, 201։

32 Նույն տեղում։

33 В. Н. Левиатов, նշվ. աշխ., էջ 69։

Աղվանական ցեղերի հասարակական-քաղաքական զարգացման վրա մեծ ազդեցություն է գործում նաև նրանց անմիջական հարևան երկրների՝ Մեծ Հայքի ու Վիրքի պետական կազմավորումների գոյությունը։ Այսպիսով մի կողմից հասարակական ու քաղաքական զարգացումը, մյուս կողմից էլ մերձավոր հարևանների պետական-վարչական ապարատի ներգործությունը շուտով հասցնում են նախնադարյան-համայնական կարգերի քայքայմանը, դասակարգային հասարակության առաջացմանն ու աղվանական պետության կազմավորմանը։

Աղվանից պետությունը, ինչպես արդեն ասվել է վերևում, գրավոր աղբյուրներում հիշատակվում է միայն մ. թ. ա. I դարից։ Արձանագրելով այս փաստը՝ նույն աղբյուրները նման կազմակերպության գոյությունը նշված դարում ներկայացնում են որպես մի նորահայտ երևույթ երկրի հասարակական-քաղաքական կյանքում։ Օրինակ, հենց Ստրաբոնի նկարագրություններում աղվանացիները պատկերված են որպես պետության ու պետական կառուցվածքի հարցերին անտարբեր մի ժողովուրդ։ Աշխարհագետը գրում է. «Պատերազմի, պետական կառուցվածքի ու հողագործության հարցերին նրանք վերաբերվում են անհոգությամբ (πολεμου δὲ καὶ πολιτείας καὶ γεωργίας ἀπρονόητος ἔχουσιν)[34]»։ Նման անհոգություն մարդիկ կարող էին ցուցաբերել միայն նորաստեղծ ու կենցաղում դեռևս չամրապնդված հասարակական-քաղաքական երևույթի՝ պետության նկատմամբ։ Այս միտքը հաստատում է նաև աղվանական թագավորի համար նույն հեղինակի գործածած և արդեն նշված «այժմ- νυνί» արտահայտությունը, որը ցույց է տալիս ոչ թե հեռավոր ժամանակներ, ինչպես իրենց ցանկության համեմատ մեկնաբանում են ուսումնասիրողներից ոմանք[35], այլ հենց հույն աշխարհագետի ապրած ժամանակաշրջանը՝ մ. թ. ա. I—մ. թ. I դ.[36]։ Պլուտարքոսի դիտողությամբ էլ, ի հակադրություն Լուկուլլոսի դեմ պայքարում Տիգրան Մեծին օգնության եկած «թագավորների», այսինքն՝ պետություն ունեցող ժողովուրդների, Կասպից ծովի մոտերքից եկել էր «աղվանացիների բազմությունը (πολλοὶ... Ἀλβανοί)[37]։ «բազմությունը (πολλοί)» տերմինում դրսևորվել է աղվանացիների հասարակական-քաղաքական կյանքում պետության նորագոյացման գաղափարը։

Պետությունների բնութագրական հատկություններից է սեփական դրամների թողարկումը։ Այս տեսակետից ևս մոտենալով հարցին, կտեսնենք, որ Աղվանքում տեղական կերտվածքի դրամները, որոնց թողարկումը, որպես պետության տարբերիչ հատկանիշ, հաջորդել է նրա ծագմանը, ի հայտ են գալիս զգալիորեն ավելի ուշ։ Պեղումներն ուսումնասիրվող երկրի տարածքում՝ Կաբալայում, Խինիսլիում, Շամախիում և այլուր, բացահայտել են դրամական գանձեր, որոնց մեջ մակեդոնական, սելևկյան, պարթևական ու

---

[34] Strabo, XI, IV, 4 (ընդգծումը՝ Հ. Ս.)։

[35] И. Г. Алиев, նշվ. աշխ., էջ 160։

[36] Մի շարք հեղինակներ գտնում են, որ Աղվանքի սոցիալական ու տնտեսական պարզունակ կյանքի նկարագրության համար Ստրաբոնը օգտվել է ավելի վաղ հեղինակների, մասնավորապես, սելևկյան դրամավար Պատրոկլեսի (մ. թ. ա. III դ. սկիզբ) տեղեկություններից, ուստի նրանց կյանքի պարզունակությունը արտահայտում է նշված ժամանակաշրջանի պատկերը (տե՛ս К. В. Тревер, նշվ. աշխ. էջ 9 և հետ.)։ Սակայն հարևան ժողովուրդների մասին Ստրաբոնի նկարագրությանը համադիր և մանրակրկիտ ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ Ստրաբոնի տեղեկությունները բնութագրում են ողջ Աղվանքն ու նրա ժողովրդին հին ու նոր դարաշրջանների սահմանագլխում [ավելի մանրամասնորեն տե՛ս Հ. Ս. Սվազյան. Ստրաբոնի աղբյուրները Աղվանքի մասին (Պատմա-բանասիրական հանդես, 1978, № 1, էջ 95—104)]։

[37] Ploutarch's Lives, vol. II, p. 554—555 (Lucculus, XXVI).

այլ դրամների մեջ գտնվել են նաև տեղական կերտվածքի, հատկապես սելևկյան դրահմանների նմանողությամբ, դրամներ[38]. Ըստ անկողմնակալ հեղինակների, վերջիններս կերտվել են ոչ շուտ, քան մ. թ. ա. I դ. երրորդ քառորդում[39], մի ժամանակաշրջան, որն հիմնավորվում է նաև մատենագիտական տվյալներով։ Ստրաբոնը գրում է, որ դեռևս Պոմպեոսի արշավանքների ժամանակ՝ մ. թ. ա. 66—65 թթ., աղվանացիների մոտ «գործածության մեջ տարածված չէ դրամը (οὐδὲ γὰρ νομίσματι τὰ πολλὰ χρῶνται)»[40]։ Եվ ելակետ ունենալով նշված դրամների դրվագման այս ժամանակը, ավելի քան հավանական կլինի կարծել, որ դրանք հատող պետությունը ծագած պետք է լինի նման պետական գործառնությունից քիչ առաջ։

Այսպիսով, ինչպես նյութական, այնպես էլ գրավոր աղբյուրները թույլ են տալիս հիմնավորապես պնդելու, որ պետությունն Աղվանքում ծագել է միայն ու միայն Պոմպեոսի Աղվանք կատարած արշավանքից քիչ առաջ՝ մ. թ. ա. I դ. սկզբներին։

Իր հարևանների՝ Մեծ Հայքի ու Վիրքի համեմատությամբ Աղվանքում պետության ուշ առաջադրման խնդիրը պայմանավորված էր պատմական ու աշխարհագրական բնույթի մի շարք պատճառներով։ Երկրի ֆիզիկաաշխարհագրական տեսակետից խիստ կտրտվածությունը, դրա հետևանքով նրա առանձին շրջանների միջև տնտեսական թույլ կապերն ու վատ հաղորդակցությունը, համեմատաբար թույլ զարգացած սոցիալ-տնտեսական հարաբերություններն ու, վերջապես, զարգացման տարբեր մակարդակի վրա գտնվող բազմաթիվ ու տարալեզու ցեղերի գոյությունը, որոնք, Ստրաբոնի խոսքերով արտահայտված, «միմյանց հետ հեշտությամբ չեն մտնում հարաբերությունների մեջ (αὐτοῖς διὰ τὸ μὴ εὐεπίμικτον πρὸς ἀλλήλους)»[41], զգալի դժվարություններ էին առաջացնում։

Ձևավորվելով որպես պետություն, Աղվանքը ամփոփվում է որոշակի սահմաններում։ Դրանք հյուսիսում կազմում են Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի հարավային՝ Կերաունյան ճյուղն ու նրանից սկիզբ առնող Սոանա (այժմ Սումգայիթ) գետը, արևելքում՝ Կասպից ծովը, հարավում՝ Կուր, իսկ արևմուտքում՝ Ալազան գետերը։ Նրա մայրաքաղաքն էր Ավթարանի բերքաառատ հովտում աճած Կապաղակ (ըստ Պլինիոսի՝ Cabalaca, իսկ ըստ Պտղոմեոսի՝ Χαβάλα) քաղաքը[42]։

Աղվանական պետությունը, առաջանալով մ. թ. ա. I դ. սկզբներին՝ 26 ցեղերի միավորման հիմքի վրա, նշված պետական-քաղաքական սահմաններով, որպես կենտրոնացված թագավորական պետություն, գոյատևում է մինչև

---

38 Е. А. Пахомов, Античные монеты в Албании (Вопросы истории Кавказской Албании, Баку, 1962, с. 106—113). նույնի՝ Монетные клады Азербайджана и других республик, краев и областей Кавказа, вып. IX, Баку, 1966; И. А. Бабаев, С. М. Казнев, Кабалнский клад монет эллинистической эпохи (Нумизматика и эпиграфика, 1971, IX); Дж. А. Халилов, Նշվ. աշխ., էջ 152—155։

39 Е. А. Пахомов, Монетные клады Азербайджана... с. 20; Խ. Ա. Մուշեղյան, Դրամական շրջանառությունը Հայաստանում, Երևան, 1983, էջ 30։

40 Strabo, IX, IV, 4.

41 Strabo, XI, IV, 6.

42 Գտնվել է Ադրբեջանական Հանրապետության Կուտկաշենի շրջանում՝ Չուխուր-Կաբալա անունով հայտնի գյուղի շրջակայքում եղած ավերակների տեղում (տե՛ս О. Ш. Исмизаде, Кабала—столица древней Кавказской Албании (Вопросы истории Кавказской Албании, с. 54—74), С. М. Казнев, Из прошлого Кабалинского магала, (Вопросы истории Кавказской Албании, с. 75—105-պրբեջ.)։

մ. թ. V դ. կեսերը, որից հետո Անդրկովկասում ամուր հաստատվելու՝ Սասանյան Պարսկաստանի վարած քաղաքականության հետևանքով վերածվելով մարզպանության, վերանում է[48]։

ОБРАЗОВАНИЕ ГОСУДАРСТВА КАВКАЗСКОЙ АЛБАНИИ

Г. С. СВАЗЯН

Резюме

Вопрос о времени возникновения государства Кавказской Албании занимал многих исследователей. Азербайджанские исследователи возникновение этого государства относят к IV—III вв. до н. э., ссылаясь на данные историка II в. н. э. Арриана об участии албанцев в битве при Гавгамеле (331 г. до н. э.), где якобы упоминается, что войско албанцев являлось войском самостоятельного государства. Однако у Арриана отчетливо сказано, что албанцы в Гавгамеле участвовали в составе мидийских войск под общим командованием их сатрапа Атропата. Следовательно, их войска являлись частью единого военного подразделения чужой страны, а это означает, что в отмеченное время государство в Кавказской Албании еще не было сформировано. Оно, как показывают данные античных историков (Страбон, Плутарх и др.) и археологические материалы второй половины I тысячелетия (Ялойлутепинской и синхронной ей культуры), образовалось в Кавказской Албании незадолго до похода Помпея в Алуанк— в первые десятилетия I в. до н. э.

Столицей новообразованного государства стал город Кабала (Чухур-Кабала нынешнего Куткашенского р-она Азербайджанской республики). Северной границей государства Кавказской Албании была Кераунская ветвь Главного Кавказского Хребта и река Сумгаит, восточной—Каспийское море, западной—река Алазан, а южной—река Кура.

Сформировавшись в начале I в. до н. э., государство Кавказской Албании с отмеченными государственно-политическими границами как отдельное, самостоятельное царство просуществовало до середины V в. н. э.

---

48 Աղվանից մարզպանությունն էլ երկար չի պահպանվում։ Արյաց արքաների վարած նույն քաղաքականության պատճառով VI դ. վերջերին այն տրոհվում է մանր ու ինքնուրույն վարչական-քաղաքական միավորումների, որոնք սկսում են հանդես գալ սեփական իշխանական տների, ցեղերի կամ աշխարհագրական վայրի անուններով։ Պատմության ասպարեզում հանդես գալով նոր անվանումներով, դրանք նաև դադարում են կրել մինչ այդ իրենց համար ընդհանուր «Աղուանք» անվանումը։ Ուսումնասիրվող տարածաշրջանում տեղի ունեցած այս վարչական, քաղաքական ու անվանական փոփոխությունների մասին մանրամասնորեն տե՛ս Հ. Ս. Սվազյան, Աղվանից մարզպանության կազմավորման հարցի շուրջը (Պատմա-բանասիրական հանդես, 1979, № 4, էջ 210—218), նույնի՝ Աղվանքը և Միհրանյան տոհմը (ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1980, № 9, էջ 91—101)։